



ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբլի, Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ Է Լ Է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաւ է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է առկա լեզուով:

Յայտարարութիւնների համար մշարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տ Է Լ Է Ք օ ն № 253.

Հ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Վ Ո Ւ Մ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՒ
ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսականը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻ» կարելի է ԽՐԱԳՐԱՏԱՆԸ:
Օտարաբարբարացիները պէտք է դիմեն հետևեալ հասցեով՝ Тифлисъ. Редакция «МШАКЪ»: իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յետադիմութիւնը չի փրկի. Ռուսաց քաղաքականութիւնը արեւելեան հարցում.— ՆԵՄԻՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սիւսի թաղաւոր Մոսկովայում. Գաղթականների զանգաար. Մասնաշարժութիւն. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլը «Կիւրի գրքի» մասին. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ. ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԿԻՄԵՆԻ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Անգլիայից:

ՅԵՏԱԳԻՄՈՒԹԻՒՆԸ ԶԻ ՓՐԿԻ

Յայտնի է, որ հէնց այն ժամանակ, երբ Անգլիան փառաւոր հանդէսներով տօնում էր իր թագուհու յօբելանսը և ցոյց էր տալիս աշխարհին, որ ինքը վաթսուս տարեկան ընթացքում հակայայան քայլեր է արել մասուր առաջադիմութեան, քաղաքակրթութեան և ազատութեան սուպա-րնչում, բրիտանական ճակատին պետութեան մի անկիւնում, Հնդկաստանում, տեղի ունեցան բաւական ծանրակշիւ անկար-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱՐ ԿԱՆԳԻԼԻՍՅՈՒՆ

ԼՕՆԴՈՆ, յունիսի 28-ին

Անորոշ, անստույգ, տարտամ, միմադին կացութիւնը անփոփոխ կը շարունակէ: Ամեն մայրաքաղաքներէ հասած լուրերը շատ անգամ, կամ գրեթէ միշտ, իրարու հակասական են: Ահա չաբաթ մը կայ, որ «Տէլիքը Նիւզի» թղթակիցներուն խօսքին նայելով խաղաղութեան զայնու գլբըրը քիչ օրէն պիտի ստորագրուէր և թիւրքերը պիտի սկսէին հետզհետէ քաշուիլ թեմալիս-յէն: Նոյն միջոցին «Թայմզ» ու «Սթանդարդ» կը պարզէին տարբեր հեռագրատեղեր մը: Նրիւթ թերթներն ալ կը ծանուցանէին թէ թիւրքերը վերջնականապէս թեմալիս մնալու համար իրենց կարգադրութիւնները կընեն: «Թայմզ»-ի է. Պոլսոյ թղթակիցը կը յայտարարէր թէ՛ «Կուտը տեղի տալ ցոյց կուտայ, առանց երբեք տեղի տալու: Նրբէք զիստադրութիւն չի յայտնի, միշտ դիմադրելով սակայն: Հարաւարուր հոս եւ հոս կը մնամը: Կերիլ թէ Կրանն ինչ-չանալանք եղած է թեմալիսի նկատմամբ: Իսկ «Սթանդարդ», որու տեղեկութիւնները զրեթէ միշտ ստույգ աղբիւրներէ են, չաբաթ մը առաջ կը հաղորդէր թէ կացութիւնը շատ ծանր է, սուլթանը զիջանելու ոչ միայն արամադիր չե-րիր, այլ և բացարձակօրէն յայտարարած է թէ՛ «կարող չէ զօրքերը թեմալիսին քաշել: Եւ իբրեւ վերջին տեղեկութիւն կը հաղորդէր. «Ա» մեն ըսն ցոյց կուտայ, որ թիւրքերը հաստատ

զութիւններ, որոնցով հնդկ ժողովուրդը կամենում էր իր զգոհութիւնը յայտնել անգլիական կառավարութեան: Անգլիական լրագրիւնները խիստ ուշադրութիւն դարձ-րին այդ վտանգաւոր յուզմունքներին վրա և մի շարք միջոցներ առաջարկեցին: Կը-րանց մէջ ամենից զարմանալին այն է, որ պահանջում են սահմանափակել Հնդկաս-տանի տեղական մամուլի ազատութիւնը, ճնշել տեղացի հրապարակաօսներին, որ նրանք միջոց չունենան արտայայտել տե-ղական կարիքները և քննադատել տեղա-կան պալատութիւնները:

Մեզ ժամանակի համար մի շատ բնորոշ երեւոյթ է այս առաջարկութիւնը: Ան-գլիական ազգը, որ ամենից շատ սիրում է մամուլի կատարեալ ազատութիւնը, որ պարծենում է թէ ինքը այդ կողմից բոլո-րովին նախանձիկ դրութիւն է դրաւել, յան-կարճ այդքան անարդար և յետադիմ մի-ջոց է առաջարկում իր պետութեան մի մասի վերաբերմամբ: Կա, ի հարկէ, ցոյց է տալիս որ անգլիացին էլ ազատ չէ ինքն-մտքերից, ցոյց է տալիս որ նա էլ ունի այն մտրութիւնը, թէ ինչ որ լաւ է իր համար, վատ է իր հետ մի ընդհանուր յարկի տակ ապրողի համար:

Բայց արդեօք այդպէս է: Ազատ մամուլը մի երկրի առաջադիմու-թեան ամենագործող խմբաներից մէկն է: Եթէ նրա զործունէութիւնը հիմնված է իրական հոգի վրա, եթէ նրա քննադա-տութեան նիւթը փաստերն են ու ան-հրեքին հանդամանքները, նա ուրեմն, զսուլվում է այն դրութեան մէջ, որ ամենից շատ նպաստաւոր է կեանքի պակասու-թիւնները դրսեւելու, անբաւականութեան առիթ տուող երեւոյթները և գեղծունէնքը վերացնելու համար: — Եթէ Անգլիայում կամ Ամերիկայում մամուլը, իբրեւ հասա-րակական շահերի պաշտպան, իբրեւ իր հայրենիքի առաջադիմութեան նախանձա-

խնդիր մի անկաշառ և ազնիւ մարմին, մերկացնում է կեանքի մէջ դրութիւն ու-նեցող ցաւերը, որոնք խանգարում են կա-նոնաւոր զարգացումը, եթէ նա անխնայ մարտնչում է ամեն մի կեղտ, ապականու-թիւն և հայրենասիրութիւն չէ համա-րում թաղցնել իրողութիւնները, միջոց-գրանով դառնում է քննադատ: — Հարկէ, ոչ: Աւր կայ քննադատութիւն, այնտեղ անպատճառ ծնունդ է առնում և զիտակ-ցական զործունէութիւն, որ աշխատում է օգտվել ցոյց տուած պակասութիւններից և կեանքին աւելի արդար, նպատակաւոր-մար ուղղութիւն տալ: — Իսկ եթէ մամուլը զրկված լինի քննադատելու, ցոյց տալու, անյայտութիւնից լոյս հանելու կարողու-թիւնից, զրանով պակասութիւնները չեն վի-րանայ, այլ, ընդհակառակն, աւելի հաստ արմատներ կը գնեն, աւելի խրախուսված կը լինեն այն հանգամանքից, որ ծածուկ և անյայտ են մնում: Լոյսը հարկաւոր է իւրաքանչիւր անողջ օրգանիզմի զարգաց-ման համար, զրկել լոյսից կը նշանակէ զրկել ապրելու կարողութիւնից: — Եթէ Անգլիան այսօր հպարտ-հպարտ յայտա-րարում է թէ ներկայ դրութեան ինքը հասել է ազատ հիմնարկութիւնների շնոր-հիւ, ինչպէս է կարողանում յետադիմ և ճնշող միջոցներ ձեռնարկել իր մի կարեւոր մասի, Հնդկաստանի դէմ: Կարո՞ղ է մի մարմին առողջ ու կենսունակ լինել, եթէ նրա մի անբաժան մասը զարգանում է անդարար, իսկ միւս մասը զրկվում է օ-ղիւց ու ջրից:

Ո՛չ, յետադիմութիւնը չի օգնի: Երկրը առաջադիմութեան է ձգտում, նրան չէ կարելի բաւարարութիւն տալ այնպիսի միջոցներով, որոնց դուք ինքներդ վաղուց էք զատապարտել իբրեւ փոսեցող, կաղմա-լուծող բաներ...

ՌՈՒՍՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼՆԱՆ ՀԱՐԱՐՈՒՄ

Ռուսաց կառավարութեան բռնած ուղղու-թիւնը և վարած քաղաքականութիւնը հայոց, կրեական և յունաց հարցերի մէջ, որը, ըստ երեւոյթին, նպատաւոր էր թիրբալին, առիթ տուեց և տալիս է շատերին կարծելու, որ Ռու-սաստանը միանգամայն փոխել է իր աւանդա-կան քաղաքականութիւնը Արեւելի քրիստոնեա-նների պաշտպանութեան վերաբերմամբ: Այդ կարծիքը հերքելու և ցոյց տալու համար, որ Ռուսաց կառավարութիւնը երբեք չէ դաւաճա-նել իր զարեւոր արեւելեան քաղաքականութեան հիմնական սկզբունքներին, «С. Петербургскія Вѣдомости» լրագիրը տպել է յուլիսի 6-ի հա-մարում մի կարեւոր առաջնորդող յօդուած վե-րոյշեալ վերագրով, որից բերում ենք մի քա-նի կտորներ:

Խօսելով այն մասին, թէ ներկայումս Ռուսաց դիպլոմատիան իր ամբողջ ոյժով աշխատում է վերականգնել թալանեան թերակողութիւն-քերի և յոյների ձեռքով այնքան անխոհմարտար խախտված խաղաղութիւնը և պահպանել արե-ւելքում status quo, լրագիրն ասում է.

«Ռուսաստանը մտադիր է խաղաղացնել Արե-ւելքը, մօտաւորապէս, հետեւալ եղանակով. չաւով հաշտութիւն կընել թիւրքայի և Յու-նաստանի մէջ, վերջնականապէս վճռել կրեա-կան հարցը և ներքին ընթրման մտցնել օսմա-նեան կայսրութեան մէջ: Կործերի ալժման վիճակը Եւրոպայում մի վտրը յոյս է տալիս, որ Ռուսաց կառավարութեանը մասամբ կաշնդլի ա-ջող կերպով դուրս բերել իր բարեբար և խոր կերպով մտածած դիտաւորութիւնը: Սակայն ա-ւելի հաւանական ենթադրութիւն կարելի է ա-նել միայն այն ժամանակ, երբ խաղաղութեան կնքումը թիւրքայի և Յունաստանի մէջ արդէն կատարված իրողութիւն կը դառնայ:

«Հայկական խառնութիւնների ծագելու հնց

գորութիւնը, կը ներկայացնէ շատ լուրջ ոյժ մը: Կըսուի, թէ ցոյց մը պիտի հարկադրէ Կու-ռը ետ կանչել իր բանակը: Յոյքը, Միջազգեքի պէս, օրհնած բաւ մըն է: Այս պարագային մէջ պահանջուած ցոյցը դրական փաստ մըն է, որ Կուռը մեծ պետութիւններուն փափագը յայտ-նող հաւաքական ծանուցագիրն ընդունելուն պէս, եթէ տեղի չի տայ, ան ատեն այդ պե-թիւններէն ոմանք, ի զիմաց ամենուն, պիտի գործածեն պէտք եղած ոյժը՝ թիւրքական բա-նակը թեմալիսէ դուրս հանելու համար, — ինչ որ կը նշանակէ թէ պետութիւններէն մէկը կամ աւելին պիտի ուզէ թիւրքից հետ պատե-րազմելու չափ առաջ երթալ, և թէ անոնցմէ ոչ մէկը անոր կողմ պիտի բռնէ:

Այս հարցումին երկրորդ մասին վրա չի ծա-րանալով, անգլիական օրաթերթը կը քննէ, թէ որ պետութիւնն է, որ պիտի ուզէ թիւրքից հետ պատերազմի բռնուիլ: Նախ կը սկսի Անգ-լիայէն և կըսէ. «Բրիտանական կառավարու-թեան առաջին գործն է Բրիտանիայ շահերուն և տարակոյսի չենթարկուող քրիստոնական պար-տականութիւնները կատարել, ամեն մարդ կրնայ Աթիքիէն և Հնդկաստանը, ամեն մարդ կրնայ մտաբերել, թէ կառավարութեան պարտքն է բանակն ու նաւատորմը միշտ կազմ և պատ-րաստ ունենալ ու է դէպքի համար: Ժամանա-կը չէ, առանց նկատողութեան առնելու ամ-բողջ կայսրութեան վրա ունենալիք հետեւանք-ները, մղուել այնպիսի ցնորական վաղը մը, որ պիտի է թիւրքից հետ պատերազմ մը, ինչ որ պիտի չէզոքացնէ Միջերկրականի նաւատորմն մեծ մասը, և պիտի զաղկեցնէ ամբողջ գործա-ծելի բանակը: Կարճ խօսելով, Բրիտանիան ին-քն իրեն համար շատ ընելիք գործ ունի, և

ճայն են կատարեալ ներդաշնակութեամբ, սուլ-թանին կամըր սակայն անոնց հակառակ է: Ա-նիկայ բնաւ միտք չունի թեմալիսի թողու-թիւն կրնայ դան պահել: Հաւաստի աղբիւրէ կըսեն թէ իր մէկ բարեկամին հետեւալ հար-ցումը ըրած է.— «Թեմալիսէն ոչ մի թիւրքերը դուրս պիտի հանէ: Արեւելի հարկ չի կայ ցոյց տալու թէ վեց պետութիւնները համաձայնած են մէկ պատասխանի մը վրա: Անտարախոյս իրենց յառաջիկայ քաղք պիտի ըլլայ միանալով ծա-նուցանել սուլթանին, թէ իրենցմէ ոչ մէկը հա-ւանութիւն կուտայ, որ թիւրքիան թեմալիսի վար դնէ: Բայց շատ տարակուսական է, որ այս զեկուցումը ո ու է արդեւնք արտադրէ, եթէ պե-տութիւնները աւելի առաջ երթալու պատասա-ված չեն: Սուլթանը հաստատ պիտի մնայ իր որոշումին մէջ մինչև համոզուի, որ վեց պե-տութիւնները—միաբանութիւնը պատրաստ է կարծիքի համաձայնութիւնէն անդին անցնել, և միացեալ գործի պիտի վերածուի: Բայց սուլ-թանը այս համոզումը ունենալէ առաջ պէտք է, որ պետութիւնները գործելու հաւանին, ասանկ հաւանութեան մը համար մեծամեծ դժուարու-թիւններ կան:

Նախ քան այս դիտաւորութիւնները քննելը, «Մօրնիկ-թօսթ» կը խօսի պատերազմական տուգանքը վճարելու համար Յունաստանի տա-րաբողջ դրութիւնը: Անկէ կանցնի թիւրքերը թէմալիսէն դուրս հանելու խնդրին, և կըսէ.

«Ո՛վ թիւրքերը թեմալիսէն դուրս պիտի հա-նէ: Դատ լաւ է առաջ բերել այն պատճառաբա-նութիւնները, թէ ինչպէս թեմալիսի նորէն թիւր-քական գաւառի մը պիտի չի վերածուի: Թիւր-քական բանակը հոս է, և իր ետին ունենալով Մակեդոնիա և թիւրքական իրմէնի հաւաքուած

որոշած են ետ չի դարձնել հիւսիսային թեմա-լիսն, առանց պատերազմելու:

Առանց պատերազմելու: Ո՛վ պիտի պատե-րազմի, ահա ինչորքը: Կերիլ թէ ինչպէս մենք, նամանապէս խնդը յոյներն ալ չեն կարող յուսա-որ պետութիւն մը պարզապէս հալելնախու-թեան համար թիւրքերը հետ պատերազմելու չափ առաջ երթալ: Եթէ ամենէն աւելի Ան-գլիոյ վրա յուսադիր եղած են հայերը կամ յոյնե-րը, այդ անուշ երազներէն ետքը տիւրք զարթ-նում մը անխուսափելի է: Անգլիա խաղաղու-թեան սիրող է, և օրհնենք կը կարգան եւրօ-պական քոստերին, որուն չնորհիւ եւրօպական խաղաղութիւնը պահպանուած: Ասկէ աւելի ինչ մեծ բարեք յուսալ, ակնկալել: Կարելի է ըսել թէ Անգլիոյ ամբողջ զգայունքը, ամբողջ կարծիքը շատ յստակօրէն պարզուած կրնան համարուիլ «Մօրնիկ-թօսթի» երկկուսն ա-ռաջնորդող յօդուածին մէջ: «Մշակի» ընթեր-ցողները յիշելու են թէ այս մեծ թերթը յատ-կապէս վերին չրջանակներու, արքունական մի-ջակային թերթն է: Այդ առաջնորդողին գը-լխաւոր կէտերը կը ծանօթացնեն:

«Մօրնիկ-թօսթ» խօսելով լուրջ Սօլդատերի այն յայտարարութեան վրա թէ՛ «Առ այժմ լու-ծում մը մօտ չենք, իսկ թէ մօտեւս պիտի կըր-նանք լուծում մը ձեռք բերել, ասիկայ աւելի մարդաբեւութեան չրջանակին կը պատկանի, քան թէ քաղաքագիտական ենթադրութիւններու», կըսէ թէ վեց պետութիւնները իրարու հետ կատարեալապէս համաձայն են խաղաղութեան այն պայմաններու մասին, որոնք պարտաւորիչ համար: Բայց, կաւելնէ թերթը, մինչև վեց պետութիւններու կարծիքները իրարու համա-

Դուռնիով պատերազմին վրա, սալթանը մեծա-
մեծ գովառները ըրած է բանալիին: Մեծ հա-
նգըք է ինձի, ըսել է, որ սպանելու նոր սե-
րունդը արժանաւոր է հիւներուն: Արտանց կը
վախազէի պատերազմին, բայց կը վախանէի յայ-
տաբարելու, վախնալով եւրօպական խառնակու-
թիւնէ: Ամին կողմէ ինձի թախանձաղքներ կըլ-
լային, բայց խորհրդակցանիւրու ետանդը զըս-
ուցելի, մինչև որ յաջողեցայ կողիցայնէն Յու-
նաստանը, և վստահ եղայ, որ միայն ա-
նոր դէմ պիտի պատերազմիմ: Ան ատեն վա-
րանտամ վերջացաւ և առաջնապու հրա-
ման տուի: Հիմա որ յաղթական եմ, Եւրօպա
ինձի կը մերմէ թէ դռամ, թէ հող, բայց մինչև
վերջը պիտի դիմաբերմ: Վախնալու ինչ ունիմ
վեց, պետութիւնները չի կրցին բան մը ընել
վաստի և իր երկու հաղար զինուորներուն, ինչ
պիտի կրնան ընել Բումէլիի մէջ յաղթական
300,000 զօրքի: Ենթադրեալ թէ սուլան ինձի
դէմ բանալիան կ'ալի, ո՞վ կը վրա պիտի առ-
նէ գործը: Սալթան ապա միջոցին ձեռքը դնե-
լով սեղանին վրա թողլիւրու դէղին, լուա մը
տերմաբար, և Եւրօպայի բոլոր մայրաքաղաքնե-
րէն հոս տեղեկութիւն ունիմ: Երբ ձնշումի խոր-

դրան մօտ և անտեղ ինքն անձամբ լսում և ընդունում է իր հայտարարութիւնը և աղերսագրերը: Բազմակիսութիւնը գոյութիւն ունի նաև Սիամում և Սիամի թագաւորի հարեմբ—արեւելեան կեանքի հետ կապված այդ հարեմբը—ամենամեծ հարեմբն է համարվում ամբողջ Արեւելքում: Սակայն Սիամի թագաւորի հարեմբում նոյնպէս տիրում է կուլտուրական կեանքի դարձեալ չնորոգի: Չուլայօղկօրն թագաւորի և շատ տարբերվում է օրինակ հենց Թիւրքիայի սուլթանի հարեմբից: Այնտեղ թագաւորի հրամանով հարեմբի կանանց ուսուցանում են անգլիական լեզու, երաժշտութիւն, պար, ձեռագործութիւն և ուրիշ օգտակար առարկաներ ու գիտութիւններ: Մինչդեռ սուլթանի հարեմբ անգործութեան, առփանքի մի զարդարուն թանգարան է: ուր ապրում են կենդանի մեռեալներ...

Ա. Ծառուբեան

Մակիւս

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԳԱՆՊԱՏԸ

(Նամակ Բագուրի)

Ռուսաճայ լրագրիւններու մէջ շատ անգամ կարգացնելը գաղթականներուն օգնելու մասին սուր և պերճախօս գրութիւններ, սակայն չը գիտեմք աղոթք կը ծառայեն լոկ լրագրաց էջեր լեցնելու, թէ անգոր յոյսերով վշտահար գաղթականի սիրտը վայրկեանաց մեղմացնելու: Լրագրիւններն մինչ ցարդ կատարած են իրենց նուիրական պարտականութիւն, միշտ ժողովրդի ուշադրութիւն հրաւիրելով թրքական սուրբն փախած գաղթականաց վրա, որոնք յուսահատ, լքեալ և անգործ կը թափառեն ամբողջ Արմատի մէջ: Սակայն, գործադարար, գործնական և իրականը շատ քիչ անգամ տեսնուի:

«Օղնեցէք գաղթականին» ու այս խօսք մինչ ցարդ հարուստներու ականջին խորթ հնչած է: Օղնել ըսելով մենք գաղթականներն ոչ թէ նիւթական օժանդակութիւն կուզենք, ոչ ընտել, —մենք մուրացկաններ չենք և մի կօպէկ իբրև ողորմութիւն վերցնելով մեզ համար մահու չափ ծանր է: Մենք կը խնդրենք գործ, որպէս զի մեր ճակատի քրտինքով կանանք այն դառն ըստին, որ մեզ վիճակված է: Մեր անցեալ կեանքը մոռացութեան տալով, դիմեցինք Թիֆլիսի քանի մի յարգելի անձնաւորութեանց, որոնք մեզ յանձնարարականք տուին Բագուրի քանի մը հանրածանօթ մեծատուններու վրա: Հայրենակիցներէն հայկայնելով ճանապարհա-

հարդը թխալորեցաւ, պետութիւններէն մէկը պատասխանեց, թէ՛ ինչ որ ինք ըրաւ՝ կը ըսէ: ուրիշ մը առարկեց, թէ մովսին մէջ աւելի առաջ երթալ չուզէր. երրորդ մը միւսներուն հետ միայն յառաջացած է, բայց մերժեց իր ժողովրդին արեւուն կաթիլ մը թափել Զոհաստանի համար. և այսպէս ամենքը: Ո՛վ թիւրքերը թէստալայէն դուրս պիտի հանէ: Կը կրկնեմ այս հարցումը—Հոն եւ միտի մնա՞մ:

Բագուրական կայանէր այս երևոյթը միտքերին կը բերէ Կ. Պոլսոյ օրագրութեան մէկ քանի յօդուածները սուլթան Համիդին իմաստութեանը մասին: Պօլսոյ թերթներուն պարտականութիւնն է տարին երկու անգամ, մէյ մը սուլթանին ծննդեան, մէյ մըն ալ գահակալութեան տարեդարձներուն, խմբագրականներ նուիրել զրուստելու վեհապետին իմաստութիւնը և իր օրով երկրին կրած ճանաչին առաջադիմութիւնը: Վայ այն թերթին, որ չի քանար գովաբանութեան մէջ երկրորդանցը պաշտօնակիցները: Բայց տարին երկու անգամ ինչ նորութիւն թերթ մը, բաւական սրամտութեամբ, եւաւ հրատարակեց թէ Վեմ Վեմութիւնները իրենց քաղաքական ուղիւթիւնը սուլթանին իմաստութեանը կենթարկեն: Գիտե՞ք զօցէ ներքի սահմաններէն քիչ մը անդին անցնելու չափ ծիծաղելի էր, ու Վաշկը եւաւ հրատարակեց, թէ Վարդը պէտք է սօյուցել լինի, որ այսպէս մի բան երեւակայէ: Բայց ահա այսօր կը փորձուինք ընդունելու, թէ ինչ որ կրնար ծիծաղելի համարուի, չափազանց երեւակայութեան ծընունդ, այսօր գոցէ տխուր ճշմարտութիւն, դառն իրականութիւն է: Ընդունելու ենք, թէ մինչև հիմա սուլթանական ճարտիկութիւնը գե-

ծախս, հազիւ ինքզինքնիւ ձգեցինք Բագուր, վրտա՛ լինելով որ տեղոյս բարեխիղճ հարուստներ, կարեկցելով մեր թշուառ վիճակին, մեզ գործ մը առլ չնորոգ պիտի ընեն: Տարանք յանձնարական նախ ներկայացրինք մէկի մօտ: Սա մեզ ճամբեց Մարգարեական ընկերութեան մի ընդհանուր անդամին—Ա. Գաղինը ժամեալ կծկված կայնեցանք նրա գրասենեակի դռան կողքին, մինչև որ բարեհաճեցաւ դուրս գալ. «ես գործ չունեմ, գացէ՛ք Մ.ին» ըսաւ և ներս մտաւ: Գաղինը Մ.ին ներկայանալու Կերթայինը գրասենեակը, ծառաներ և զործակատարներ մեզ կը խաբէին, թէ հիմա դնաց տուն՝ Կերթայինը տունը, կըսէին: Հնա այս ժամանակ ընտաւուն չի գար, անպատճառ դրասենեակ կը լինի: Վերջապէս երեք օր անդադար մեզ դէս ու դէն ճամբելով մեծ դժուարութեամբ հազիւ ներկայացանք Մ.ին: Սա ալ ճամբեց Թ.ին, Թ.ն ալ Կ.ին:

Թշուառութիւն օրըստօրէ կը ծանրանար, ուստի աղերսական խնդրագրերով կրկին ու կրկին դիմումներ ըրինք, բայց եթէ կարելի է ապառաժէն ջուր սպասել, ուրեմն կարելի է միլիոններու մէջ յղիցած հարուստներէն գոթ ու կարեկցութիւն: Ինչ ընենք, երբ հարուստներ խուլ կը մնան դէպի մեզ: Յօյս դնենք միայն մեր անխնայ բազմութեան վրա և թող մեր ճակատի քրտինքը խաղաւ լեցնէ այն դառն ըստը, զոր նախախնամութիւն մեզ վիճակեց խմելու: Առանց ընդգրկելու դիմադրենք ամեն դառնութեանց, կուրծք տանք այս փոխորակից կեանքի ամեն խոչընդոտից, թող մեր վիշտ ու կոծին և անցելուն կսկծալի յիշատակներու վրա անկարեկիր աչքով նայի մեծատունը: Բնաւ յոյս չը դնենք այս կամ այն անձնաւորութեան վրա, վասն զի գործնականապէս համոզվեցանք, որ ցնորական երազ մը է այդ: Մենք գաղթական չորս ընկերներս Բագուրի առաջնորդէն մինչև քահանային և ամենանշանաւոր մեծատունէն մինչև յետին հարուստը դիմեցինք, սակայն թիւս և վերաբերիլ խօսքերէն ի դատ ոչ մի օգուտ չը ստացանք. դէթ մեզ մի քաղցր և մեղմ ըստը մը ըսէին, այդ ալ դարձեալ մեծ միլիթարութիւն մը էր: Ամենաստուր գործն իսկ յանձն առինք, սակայն այն ալ մեզ խնայեցին. գլուխներս մինչև գետին ծնեցինք, կոնակնիս բեռ դնող չեղաւ. մեր քրտինքը մէկ կօպէկի ծախեցինք, այն ալ առնող չեղաւ:

Սակայն մեզ վրա պարտը կայ խոստովանելու, որ Բագուրի անապարհը գործառններու մէջ բացառութիւն կը կազմէ պ. Հ. Մելիքեանց, որ

բազմանցեց ամեն դիւանապետական իմաստութիւն: Եւ սակայն մինչև երբեք Այս ալ հարցում մըն է: Երկու օր է քաղաքական աշխարհի մէջ տիրող իրարանցումը կրնայ մեղի քիչ մը, շատ քիչ սակայն, յոյսի պէս քաջալերութիւն մը տալ, թէ թերեւ անպատեհի նորութիւն մը առաջ գայ, և սուլթանը գոնէ այս անգամ այլեւ դատ մը առնէ, դատ մը, որուն հետանքները կրնան մեզի ալ օգտակար ըլլալ, մեր գործադրութիւններուն գոնէ պղտիկ դարման մը:

Նոր լուր մը չունիմ մեր գործադրութիւններու մասին, միայն ուշադրաւ է հոս հասած պղծախի տեղեկութիւն մը. հետեւեալ հեռագրութեցաւ քանի մը օր առաջ: Նախագահներէն Կ. Պօլսոյ հասած տեղեկութիւնները ցոյց կուտան, թէ 1313 թուականին (թիւրքական ելմասական տարին) տուրքերը ամբողջապէս դաժնած են, իրողութիւն մը, որ շատ անսովոր ըլլալուն շատ կարեւոր է: Մեզի համար սակայն շատ կնճռոտ խնդիր չէ, հայկական թաղանթներով հարստացած թիւրքերը զիրար և կը վճարեն տուրքերին: Իսկ թշուառ հալը ինչ չարչարանքներու, զրկանքներու ենթարկուած է այդ վճարումին համար:

Հելլենական խնդրին առթիւ պարզուած այս յօդուածին պատկերը անշուշտ ալ մեզի չի յուսադրեր, մինչև որ քաղաքականութեան մէջ անսպասելի փոփոխութիւն մը տեղի չունենայ, թեկէն բարեկարգութեան մը իսկ յոյսը դնել: Իրաւ է, որ երբէք «Գլխի-Թեղեկարար» բան մը կը սփռեցնենք խմբագրականի մը վերջ: Կըստպատի որ, կըսէր, այս բոլոր խառնակութիւններէն դուրս գայ բարեկարգութիւններու ծրագիր մը, որով Թիւրքիոյ խեղճ քրիստոնեաները

մինչ ցարդ դէպի գաղթականներն ունեցած համակրութիւն գործնական կերպիւ ցոյց տուած է: Այս պարանի գործին մէջ այսօր 8—10 գաղթականներ կան: Եթէ ամեն հարուստներն ալ գէթ նրա չափ կատարէին իրենց կաղաքակցական պարտականութիւն, այսօր հարիւրէն աւելի թշուառ ընտանեաց վիշտեր ու կարօտը ամբլված կը լինէր:

Գաղթականներ

Մ Ա Տ Ն Ա Գ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն

«Գ ա լ թ Կ ո պ ե լ ր Փ ի լ Գ» —Վիկտորի, թարգմ. Պ. Պ. Թիֆլիս 1897. 370 էրես, in 12, դինը 1 ռուբլի:

Հնչակաւոր անդլիացու այս գործը յանձնարարութիւնների կարօտ չէ. նա վայելում է համախարհային հռչակ, և մենք մեր գոհութիւնն ենք յայտնում, որ այդպիսի մի գեղեցիկ վէպ կուենան հայ ընթերցողները: Ափսոս միայն որ դա ամբողջ ընթերցի թարգմանութիւնը չէ, այլ ուսուցիչն համառօտած թարգմանութեան թարգմանութիւնը: Բայց, նկատի առնելով որ մեծ ու հռչակաւոր գործերի կրճատումը սովորական բան է բոլոր տեղերում, նկատի առնելով մասնաւոր այն, որ ուսու համառօտողը բարեխիղճութեամբ է կատարել այդ գործը, ներկայ թարգմանութիւնը կարելի է համարել նպատակայարմար: Հրատարակչական ընկերութիւնը, որի հրատարակածն է այս գիրքը, լաւ կանէր, եթէ քիչ էլ էփան դէն նշանակէր:

Թարգմանութիւնը անաղղ է: Թարգմանիչը ազգային ճաշակիչ սիրահար է երևում: Դրա առաջին նշանն է այն, որ նա առեւելք տալով է օտար բաները. նրա կարծիքով «լամպա» գրելը մեղք է, պէտք է գրել «կամբար» (կարծես չղամբար): Հայկ նախադրի հարաւ խօսքն է: Մանաւանդ շատ տանջել են կերպաւորների աշունները. «կողիկ» (կօլէտ), բայց եւրօպական խոսանոցը, վերջ է վերջոյ յաղթանարել է թարգմանչին և մենք տեսնում ենք բերիչութեան, «սօսու» բառերը, մինչդեռ նրանց կողքին նրա տաժ են մատից կարկանդակ» (այս բառը հարկը ու մի տեսակ թխածքի միտքն ունի), որ որպէս թէ պիտի նշանակէ «պաշտէտ». կայ և «շողողան», այսինքն «միլէ»: Բառարանները շատ են ստրկացրել թարգմանչին: Սակայն, թողնելով այս մանր մոտեր պակասութիւնները, որոնցով խնդրված է գիրքը ծայրէ ի ծայր, մեզ դարմարեց լեզուական այն շաղապանդաւը, որ ներկայացնում է գրաբարի և ուսմական բառերի ու դարձածքների ազատ գործածութիւնը: Մի տեղ տեսնում էք. «սկսեցի հայիլ»:

Քիչ մը հանգիստ ընեն, քանի որ Թիւրքիոյ բաժանումը յետաձգուած է: Եւ ահա այս աւուր Վթիմադարը կը հրատարակէ հեռագիր մը, որով Կ. Պօլսոյն կը ծանուցանեն, թէ բարեկարգութիւններու խնդիրը պէտք է բոլորովին թաղել: «Թիւրքիոյ արդի ընթացքէն յայտնի կերի, թէ առկէ կարճ անցեալէն աւելի զգուար պիտի ըլլայ բարենորոգումներու մասին բան մը ձեռք բերել: Իսկ այդ բարենորոգումը բառին արտասանութիւնը կը բաւէ կատարեցնելու թիւրքական ու է պաշտօնեայ. և եթէ վերադարձ մը չըլլայ դէպի այն սահմանադրութեան հին գաղափարին, որով թէ իսլամները և թէ բրիտանները նոր առանձնադրութեան կուենան, Գուրը խուլ պիտի մնայ ամեն ստաջարկի:

Թիւրքը բարեկարգութիւններու անհայտ թըշնամի է. բնածին առեւելքի ունի ամեն գաղափարի, որ կը ձգտի գեղծութեանը քննադէմ: Այս ճշմարտութիւնը ամենքը գիտեն, և սակայն ահա նորէն «Վթիմադարը» հարկ կը տեսնէ յիշեցնել զայն: Իր թղթակցը Պօլսոյն կը հեռագրէ հետեւեալը, զոր անդիմացիներուն չափ «Մեշակի» ընթերցողներն ալ հետաքրքրութեամբ պիտի կարդան, թէ և ոչինչ նոր ըլլայ մէջը:

Պահպանողական մեծ թերթին թղթակցը կը գրէ. «Թիւրքական հին դպրոցին պատկանող դիւանադէտ մը, որ բարեկամ է Անդլիոյ և անգլիացիներուն, հետեւեալ կերպով կը պարզէր օսմանան պաշտօնական շրջանակներու զգացումները. «Մենք կը կարծենք թէ Անդլիոյ հետ իրապէս մտերմական յարաբերութիւն մը անհնարին է: Ասանկ փոփոխութեան մը սպասելու չենք, որչափ առեն որ սուլթանը պաշարուած է Բարիկ ու Պերլին զիտարապէս յառաջացած

մայիլ լուսնին նայել, միւս տեղ—«չափան թօթաթիւ» տիկինը բռնեց: Ինչ հարկ կայ «էջերի» փոխարէն գործ ածել «չանոնց» —Երեմ թարգմանիչը կարծել է թէ Գիկիլիոյ գործը անարժան է մի թարգմանութեան, որ կատարված լինէր պարզ և մաքուր աշխարհաբարով:

«Թիւրքեր» —պրօֆէսոր Բողանովի, ազատ թարգմ. Լ. Լ. Մելքե-Աղաճանի, Երես 120, in 8, դինը 50 հ.

Ահա մի այլ գեղեցիկ գիրք, որ լոյս է ընծայել Հրատարակչական ընկերութիւնը: Հեղինակը յայտնի բնագէտ է, բայց մասնաւոր լաւ անուն է հանել իր ազգանունը ժողովրդական գրուածքներով, որոնք վերաբերվում են կենդանիների կեանքին: «Թիւրքեր» —դրանք մի չարք վերին աստիճանի գեղեցիկ և հետաքրքրական նկարագրութիւններ են, որոնց մէջ իւրաքանչիւր գրագէտ տեսնում է այն կենդանիների կեանքը, որոնք ապրում են մարդու շուրջը, վնասում են նրան կամ օգուտ են տալիս: Գիրքը զարգարված է պատկերներով և զիւրաւանդելի է հասարակ ժողովրդին, որին նա մեծ օգուտներ կարող է տալ: Ցանկայի է, որ այս գեղեցիկ գիրքը շատ տարածվի, մասնաւոր մեր դաստաններում:

Գրքի տարածման շատ նպաստել կարող է և աղոյ թարգմանութիւնը, որ կարգացվում է հեշտութեամբ և կարելին եղածին չափ պահպանել է բնագրի գեղեցիկութիւնը: Դժբաղդաբար թարգմանիչը շատ է ոգևորվում գաւառաբանութիւններով, որոնք մի քանի տեղ վնասում են գործին: Բացի դրանից կան տեղեր, ուր թարգմանիչը չէ պահպանել բնութեան գեղեցիկ նկարագրութիւնները: —Յամենայն դէպս, «Թիւրքեր» թարգմանութիւնը կարելի է համարել բոլորովին յարմար այն նպատակին, որին պիտի ծառայէ գիրքը ժողովրդի մէջ:

«Թիւրքեր» — ընթերցանութիւնը — Յ. Տէր-Մելքեանի, Թիֆլիս 1897. 61 էրես, in 12, դինը 25 հ.

Մեր մէջ էլ սկիզբ է առել ժողովրդի համար նշանակված էփանադին գրքերի հրատարակութիւնը, և պ. Տէր-Մելքեան լաւ ծուռաթիւն արած կը լինէր թէ թարգմանիչներին, թէ հրատարակիչներին և թէ առհասարակ ժողովրդական ընթերցանութեամբ հետաքրքրվողներին, եթէ փոխանակ մի քանի կցկուտ տեղեկութիւնների, որոնք բաղված են ուսու հեղինակների գործերից և վերաբերվում են միայն ուսաց ժողովրդական գրականութեան, տար աւելի հիմնաւոր ուսումնասիրութիւն, որ կարողանար գործնականապէս զիջալարել մեր մէջ աշխատողներին:

Երիտասարդ ու փառասէր սպասարկուներու վճարակէն Այսօր եթէ ամենէն ծեր խօսքէ մինչև ամենէն պղտիկ զարդակաւոր հարցնես թէ՛ ինչ և ո՛վ եղաւ Թիւրքիոյ արդի բոլոր գիտաբանութիւններուն պատճառը, ան քեզի պիտի պատասխանէ. «Անգլիա»: Պատասխանները այնքան լաւ տարածեցին այս գաղափարը, որ հիմա ամեն թիւրքի ընտանեացած է իր դուրանին պէս: Եւ յետոյ, այս վերջին քանի տարւան մէջ Թիւրքիա հետեւած է անանկ քաղաքականութեան մը, զոր ոչ մէկ եւրօպացի կրնայ հասկնալ: Ամէն պետութիւնէ բարեկամութիւն և ծառայութիւն կը սպասէ, առանց փոխադրութեան: Եթէ փոխադրութեան մասին հարցնես, միանգամայն թշնամի կարգը կանցնես: Անգլիա մենէ բարեկարգութիւն կը պահանջէ և յամառութեամբ իր պահանջներին հետեւի կիշնայ: Չի հասկնար, կամ չուզէ հատկաւ որ թիւրքերը կատալարող և տիրապետող ցեղ մըն են, որ միայն կապրին Անգլիոյ դարմանելու ուղած գեղծութեանը: Զեղծութեանը ջնջել իրենց օրվան հացը ջնջել կը նշանակէ: Անգլիա կը փափագի մեզի լաւ վարչութիւն մը տալ: Մենք աղօր անըդունակ ենք, հետեւաբար այդ մեզի կը տանի քրիստոնեաներու վրա մեր ունեցած բնածին իրաւունքն զրկելու, յաղթական սուրով վատտեւած իրաւունք: Մենք չենք կրնար այս բանս տանել: Մենք ազգայնապէս դուցէ ծածկված ենք բորոտութեամբ ու վերքերով, բայց մենք նախապատիւ կը համարենք ձեռքը, որ կը շոյէ մեր ախտաւոր մարմինը, քան թէ դանակի զինող ձեռքը: Մէկը կը համբուրենք, միւսը խածնելու պատրաստ ենք:

Ահա թրքական հոգեբանութիւնը:

Ինչպէս հակորդում է Էջմիածնի «Արարատ» ամսագիրը, այս տարի Գեորգեան Ֆեոփանում աւարտել են իրանց ուսման ընթացքը ինն հազի, որոնք են՝ Սարգիս Ասդուրեան, մշեցի, Աստուածատուր Գանճեցեան, շուշեցի, Յարու- խիմ Եկնեան, զազախեցի, Վահան Թաւաղ- բէղեան, մոզզօյցի, Յակովբ Թօփաքեան, կիրիկե- ցի, Սարգիս Նիսիկեան, թիփլիսեցի, Ասլան Շահնաղբեան, զարաբալցի, Ղազար Սմա- տեան, զազախեցի, Սմբատ Տէր-Աւետիսեան, Լո- ունեցի:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ մեզ գրում են. «Անցեալ շաբաթ, մեր քաղաքային նորակազմ վարչու- թիւնը նիստ ունեցաւ Առաջարկված էին 23 զանազան հարցեր, ինչպէս, օրինակ, քաղաքի լուստարութեան, մի քանի թաղերում ջուր բե- յեւելու, արտադրողները ծախելու, ոչխարները ցանքերի շրջանից հեռացնելու, ուստաց քաղա- քային ուսումնարանի շինութեան և այլ հարցեր: Այդ հարցերից շատերը քննվեցին և վճռվեցին, իսկ մի քանի անհրաժեշտ հարցեր անորոշ ժա- մանակով յետաձգվեցին: Օրինակ, նոր աղբիւր- ներ կառուցանելու հարցը, որ տարիներից է վեր ձգւելու է և որը այդ բոլոր հարցերից ա- ռաջնակալըն է, այդ նիստում երեսի վրա թողն- վեց, չը նայած որ նախկին դեպուտատ Բուր- նազեանց 5—6,000 բուրլը ծախելով թու- ջեայ խողովակներ է գնել՝ քաղաքի մասերում աղբիւրների ջրեր անցկացնելու համար, իսկ քաղաքային վարչութիւնը չէ կամենում ընդունել այդ խողովակները իրեն քաղաքի ունեւորու- թիւն (խողովակները գնված են քաղաքի փողով), այլ ցանկանում է թողնել յիշեալ դեպուտատի վրէժի, պատճառ բերելով թէ վերջինս ինքն իր գլխու, այն է առանց հասարակութեան կամ- քը հարցնելու է պատկերել այդ խողովակները և այդքան գումար ծախել, հետևապէս նա ինքն պէտք է տուի այդ գումարը: Այդ խնդիրների թուում հարց էր դրված նաև, որ քաղաքը շաբա- թական և րկու անգամ պոստ ունենալու փոխա- րէն երկու անգամ ունենալ, որի համար ծախս էր նախատեսված մօտ 200 ր.: Այդ խնդիրը քաղաքային վարչութիւնը մերժեց, առարկելով թէ մեր քաղաքի համար դեռ չարաթը երկու անգամ պոստ ունենալն էլ չափ է...»

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ մեզ գրում. Այս անցել է տարի ու կէս, ինչ Նոյնիսմ գոյութիւն ունի քաղա- քային վարչութիւն, բայց առաջ քաղաքը աւելի բարւոյ դրութեան մէջ էր, քան այժմ: Փողոցները կեղտոտ, փչացած և մոխր. լապտերներ չը կան կամ եղածներն էլ կէս վերած մէկը միտից հեռու, այն էլ մի որ և է լապտերի տան առաջ: Փողոցում թափված խոշոր քարերի, փայտ և ցեխի պատ- ճառով անցնելը անհնարին է: Ամենայայտնի բա- ցարի փողոցը կոչան գետը փչացել է, մինչև այսօր էլ այնպէս մնում է. կամուրջները, որ նոյնպէս քնել էր տարեւ, դեռ չեն շինված: Գետի միւս ափը հաւատարմի է գետի հետ և վտանգ է սպառնում ամբողջ հայոց թաղին. կարող է ան- ցեալ տարվայ պէս տառնեալ հաղարները վնաս տալ, բայց ով է ուշադրութիւն դարձնում. դա մեր դործը չէ, այս է վրնում վարչութեան պա- տասխանը: Միթէ իւրաքանչիւր տարի երեք- չորս հազար բուրլը կոչան և քիչ գետերի հա- մար փող հաւաքել վարչութեան պարտքն է: Իսկ դործադիրը և իրադրծելը իրանց պարտքը չէ: Երեկոյան ժամը 10-ից յետոյ քաղաքում կառք չէք գտնի. թանդութեան մասին տեղորդ է խօսելը. մի ֆունտը 9—10 կօպ., բայց միշտ մի կօպէլ էլ տակապից աւելի են ծախում: Բազարի վերակացուն անգործեալ է և կիթ չնու- չի: համար ուղեւոր սրճաւանդութիւն կաղմել, պէտք է խնդրէ կողմնակի մարդու: Դրաման ամական երկու անգամ նիստ է ունենում, բայց տասն և չորս ճանաւորներից ոչ մէկը նիստերին չեն գալիս, այլ իրանց տանը ծաղկատակի նը- տած երկու ձեռքով են ստորագրում թղթերը:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍՈՒԼԸ ԵՊԻՍԿՈՍ ԳԻՐԵՒԻ ՄԱՍԻՆ

Անցեալ շաբաթ ֆրանսիական պարլամենտի անդամներին բաժանվեցին երկու «Գիւղին» զըր- քեր: Գրանց մէջ հրատարակված զօկուսման- ները առանձին հետաքրքրութիւն չեն ներկայա- ցնում, որովհետև, իսկապէս, նրանք ոչինչ նոր բան չեն հաղորդում պետութիւնների արեւեան քաղաքականութեան վերաբերմամբ: Հետաքրքիր են նրանք միայն որպէս այդ քաղաքականութեան ընդհանուր պատկերը ներկայացնող նիւթ Արեւել- թի ներկայ բաւական երկարատեւ ճգնաժամի ժա- մանակ: Այդ մարդ էլ չաճագործում արեւմտեան մամուլը այդ նիւթի, և բաւական տարբեր եղա- կացութիւններ է գալիս: Վիէնայի «N. Fr. Presse» լրագիրը ասում է, որ «Գիւղին» զըրքերը փաստերով ապացուցանում են պետութիւնների

միաբանութիւնը՝ չը խախտել և չը թոյլ տալ խախտելու եւրոպական խաղաղութիւնը ընդհան- րապէս և Առաքիւյի ու Ռուսաստանի միաբա- նութիւնը մասնաւորապէս, չը նայելով որ Անգ- լիան մի փոքր թուութիւն էր ցոյց տալիս և միայն հետեւում էր ուրիշ պետութիւններին ա- կամայ: Այն ժամանակաշրջանում, որին վերա- բերվում են «Գիւղին» զըրքերի» հետազոտները, եւրոպական համաձայնութիւնը ուղղված էր Գու- նաստանի դէմ, ներկայումս նա ուղղված է Թուր- քիայի դէմ. նա մնաց անխօսելի և մինչև ան- զամ կատարելագործվեց, որովհետև այժմ Անգ- լիան այլ ևս ցանկութիւն չէ յայտնում իր առան- ձին ճանապարհով գնալ:

«Kölnische Zeitung» լրագրի կարծիքով «Գի- ղին» զըրքերի զօկուսմաներից երկու որոշ վստա- է պարզում Ֆրանսիայի վերաբերմամբ. 1) որ ֆրանսիական կառավարութիւնը աջողութեամբ աշխատում էր Թուրքիայի բաժանման առաջն առնել, որից օգուտ կը քաղէին ուրիշ պետու- թիւնները, իսկ ինքը ձեռնառնայ կը մնար, և 2) որ բանակցութիւնների ժամանակ նա յա- ճախ յանձն էր առնում ձեռնաբեցութիւն, օրի- նակ, պատերազմը դադարեցնելու և կրեալի ինքնավարութեան վերաբերմամբ: Ինչ վերաբե- րում է Գերմանիային, նա երկար ժամանակ պաշա- պանում էր Պրիւսիայի պայտերու առաջնորդու- թիւնը, նախ որպէս զի ստիպէ Գունաստանին յունական զօրքերը յետ կանչել կրեալից և ապա յոյն-թուրքական պատերազմի առաջն առնելու նպատակով: Գերմանիան առհասարակ անհրաժեշտ էր համարում եւրոպական միջոցներ Գունաստանի յանդուգն ընթացքի դէմ, որը սպառնում էր եւրոպական խաղաղութեանը, խախտում էր մի- ջազգային իրաւունքը: «Յայնսթրիթ» լրագիրը, Մար- չալի կարծիքով, վտանգաւոր միջնորդ էր օտեղծել բաղանդան ուրիշ պետութիւնների համար: Եթէ Գունաստանի դէմ եւրոպական միջոց- ներ չը գործ դնվին նրան խեղճ բերելու հա- մար, այն ժամանակ անկարելի կը լինի արգելել Թուրքիային պատերազմ յայտնել Գունաստանին:

Հետաքրքիր եղաւակցութիւններ է դուրս բերում «Գիւղին» զըրքերի զօկուսմաներից «Temps» լրա- գիրը: Եւրոպայի դիպլոմատական անալոգու- թիւնների ամբողջ միջոցը այժմեան ճգնաժամում գցում է Անգլիայի վրա: Նա ապացուցանում է, որ ճգնաժամի հէնց սկզբից Անգլիան ցանկա- նաւ էր առանձնակի գործել, և այդ իր վար- մունքով անիրազարծել յոյսեր տուեց յոյններին, իսկ վերջի վերջոյ ճակատագրի կամքին թո- վեց նրանց: Կրեալական հարցը այն պատճառով սուր բնակարանութիւն ստացաւ, որ Անգլիան դէմ էր այն միջոցներին, որոնք եթէ իր ժամանակ- կին գործ դնվէին, առաջ կգոնէին Վաստի- աի իջնելուն: Փանի որ կրեալի պայտերումը կարող էր նախազգուշական լինել, Անգլիան զիմարում էր նրան, իսկ երբ նա պա- ժող և ճնշող բնակարանութիւն ստացաւ, միա- ցաւ նրա հետ: Անգլիան հակառակվեց և յունա- կան ծովային պաշարման, —միակ միջոցին, որը կարող էր պատերազմի առաջն առնել: Նա հա- մաձայնվեց վերջապէս Վիժի պաշարմանը, բայց երբ արդէն այդ պաշարումը աննպատակ էլ դար- ձել: Իւրաքանչիւր բայալովութիւն, երբ խօսք էր լինում Գունաստանի վրա ճնշում գործ դնելու կամ որ և է ձեռնարկութիւնների մասին կրե- ալում, Անգլիան զիմարութիւն էր ցոյց տալիս, ոչնչացնում էր այդպիսով ենթադրված ընդհա- նուր միջոցը և միայն այն ժամանակն էր հա- մաձայնվում, երբ այդ միջոցը ուշացած և ան- նպատակ էր: Սակայն, —նկատում է «Temps», անարդար կը լինէր բոլոր այդ թիւրիմացութիւն- ների պատասխանատուութիւնը զցել միմիայն Անգլիայի վրա, չափ չափ Գերմանիան կա- տարեկապէս հակառակ նպատակներով կարծես չըլիմաութեամբ էր համաձայնվում միմիայն ու- րիշ պետութիւնների ձեռք առած միջոցին: Տարօրինակ ստանութիւն էր ցոյց տալիս և Աս- տրիան, այնպէս որ իւրաքանչիւր բայալովութեամբ հարկը ստիպում էր հոգ տանել համաձայնու- թիւն կայացնել պետութիւնների մէջ երբեմն բուն ձեռնարկ զիջումներ անելով: Հասկանալի է, որ այդպիսի պայմաններում գործը առա- չէր գնում: Իսկապէս միայն Ֆրանսիան և Ռու- սաստանը, և զուգէ Խաղիան միակ պետութիւն- ներն էին, որոնք անկեղծ կերպով ցանկանում էին գործը աջողութեամբ պատկել: Նրանց չնոր-

հիւ է, որ եւրոպական կօնցերադ անխախտ մնաց և պատերազմ չը բռնկվեց: Բաղանդան տմբողջ թերակցող վրա: Եթէ նրանց չաջողվեց տեղա- կան պատերազմի առաջն առնել, դրա մէջ նը- րանք մեղաւոր չեն:

Մի փոքր մեղմութեամբ է վերաբերվում Անգ- լիային «Journal des Debats» լրագիրը: Լրագրի կարծիքով, Եւրոպայի իր ձեռքից եկած ամեն միջոցը գործ դրեց պատերազմի առաջն առնե- լու համար, բայց ինչ կարելի է անել մի ժա- ղովրդի հետ, որը վճռել է անպատճառ անմը- սութիւն անել: Եւրոպայի հասարակական կար- ծիքը հէնց նոր ծանօթացաւ «Կապիտ» և «Գի- ղին» զըրքերի հետ հակապան կոտորածի մասին, և նա թոյլ չը տուեց ստիպողական բռնի մե- ջոցներ գործ դնել Գունաստանում կամ կրե- ալում: Կան սակայն և անբարեկամ զործիք- ներ «Գիւղին» զըրքերի մէջ զետեղված զօկու- մենտների մասին: Ֆրանսիական մի լրագիր ա- սում է, որ ամենանշանաւոր և հետաքրքիր դո- կումենտները, որոնք կարող կը լինէին բա- ցատրել, թէ ինչու չէր կարելի պատերազմի ա- ռաջն առնել, մնացել են առանց տպագրու- թեան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Standard» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է, որ երկու խորհրդակցութիւններից յետոյ մինիստրական խորհուրդը անցեալ շա- րաթի սուլթանին մի զեկուցում ներկայացրեց, որի մէջ այն միտքն էր յայտնված, թէ եւրոպա- կան կօնցերադ խաչի միաբանութիւնն է կիսա- լուսնի դէմ: Այդ զեկուցմանը սուլթանը իբր թէ պատասխանել է հետեւալ իրադէպով. «Ես հա- մազված եմ, որ պետութիւնները աշխատում են եւրոպական խաղաղութիւնը պահպանել և ապա- զայ բարդութիւնների առաջն առնել: Այդպիսի պայմաններում Թուրքիան, ոգևորված նոյնպիսի խաղաղասէր զգացումներով, պարտաւոր է իր կողմից նոյնպէս նպատակ վերջ դնելու այժ- մեան անքնական դրութեան: Այդ պատճառով հրամայում եմ իմ մինիստրներին հնարաւորու- թեան չափ միջոցներ գտնել՝ աւարտելու բա- նակցութիւնները և անյապաղ ստորագրելու խաղաղութեան սկզբնական պայմանները:

Կ. Պօլսում վերջերս բազմաթիւ ձեռքապա- լութիւններ են տեղի ունենում: Բ. Դուրը լուր է տարածում, որ իբր թէ այն անձինքն են կա- լանաւորվում, որոնք քաղաքում են յետ չը տալ Թեսալիան «Daily News» լրագրի թղթակիցն ընդհակառակը հաստատում է, որ առաջվայ նը- ման կալանաւորվում են երիտասարդ Թուրքիայի կուսակցութեան անդամները:

«Post» լրագրում հետեւալ հեռագիրն է տպված Կ. Պօլսից. «Թեսալիական հարցի պա- ճառով պետութիւնների դէմ մահմետականների զայրոյթը դնալով ստոյականում է. ոչ միայն սպառնալի նամակներ է ստանում սուլթանը, այլ և իրիդ-Վիտիկի պատերի վրա թղթեր են կայցրված, որոնցով նախազգուշացնում են սուլթանին Թեսալիայից չը հրաժարվել: Ար- ղուլ-Համիդի գահը, յիշաւ որ վտանգի մէջ է: Այս թէ ինչ պատճառով մինիստրները հա- մազում են նրան չը զիջանել օտար պետու- թիւնների առաջադրութիւններին, որոնց յայտ- նի չէ, թէ ինչ կրիտիկական դրութեան մէջ է գտնվում փաղիշար: Օտար պետութիւնների մէջ գտնվող թուրքացի զեկուսմաններն հրամայված են բացատրել այն պատճառները, թէ ինչու սուլ- թանը չէ կարողանում զիջումներ անել Թեսա- լիական հարցում:»

«Königsberger Zeitung» լրագիրը հաղոր- դում է, որ Պետերբուրգից սպառնացել են սուլ- թանին ճնշող միջոցներ գործ դնել Փարս-Ասիա- յում, եթէ Թեսալիայից չեն հեռանալ թուրքերը:

«Սթենդի» «Times» լրագրին հաղորդում են, որ կանգնալով բրիտանական զօրքերի և բաշե- բուզութիւնների մէջ ընդհարում տեղի ունեցաւ, ո- րի ժամանակ սպանվեցին 16 անգլիացիներ և բազմաթիւ բաշիբուզուկներ: Երկու պատերազմական նաւեր ուղարկեցին կան- ղիա մահմետականների պաշարման յարձակումնե- րի առաջն առնելու համար:

«Daily News» լրագրի խօսքով, Բ. Դուրը պահանջեց պարսից կառավարութիւնից հեռա- ցնել զօրքերը առիական սահմանից:

Կ. Պօլսից հաղորդում են «Politische Corres- pondenz» լրագրին, որ երիտասարդ թուրքերի կուսակցութեան զաւարտութիւնների մէջ մե- ղազրկող զինուորական, ծովային և բժշկական զորքային աշակերտների ու օֆիցերների թիւը հասնում է 100 ի: Նրանց գործը կը ընդմի Պէ- րայի ետև «Թաշ-Կարիա» գործադուլում, մի ար- տակարգ զինուորական դատարանի ձեռքով:

«Berliner Tageblatt» լրագրին գրում են Կ. Պօլսից, Վիէնա փաշան, որ ծածուկ եկել էր այստեղ, իբր թէ յայտնել է, որ Թեսալիայից առ- այժմ անկարելի է հեռանալ: Ես յայտնում եմ առաջվայ կարծիքը, թէ չը նայելով թագաւոր- ների սուլթանին ուղղած ինքնագիր նամակնե- րին, ենթադրութիւն չը կայ ձեռնարկել Թեսա- լիայի դատարկելուն: Ֆրանսիական դեսպան կամբոն երկար ունկնդրութիւն ունեցաւ սուլթանի մօտ և վճռական կերպով խորհուրդ տուեց նրան ձեռնարկել թէֆուրներին:

Յունիսի 26-ին Լիսաբոնում տեղի ունեցաւ մի տօնախմբութիւն Հնդկաստանի ծովային ճա- նապարհի զիւտի չորս հարկւրամեակի առթիւ: Թագաւորը ներկայ էր Լիսաբոնի աշխարհաքաղական ընկերութեան հանդիսաւոր նիստին. նա արտա- սանեց մի ճառ, որով հարկաւոր մեծաքանակ մատուցեց մեծ ծովագնաց վասիլ-Վրասային: Պօրտուգալիայի միւս քաղաքներում էլ տօնեցին այդ հանդէսը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այժմ չէ անցնում, որ Աւետիք Արասխանան մի որ և է անհամութիւն չանի: Գնալով այդ անհամութիւնները դառնում են ջրայի, անմիտ, բոլորովին ձուլվում են պատաւական խորա- սանքների հետ: Կա էլ ի հարկէ, «Երազման» գործունէութիւնն է, ինչ խօսքը «Մուրճի» յու- նիսի համարում Արասխանան դարձեալ «Մշա- կի» դէմ ինչ որ բան է թոթովում, թոթովում է, ինքն էլ չը գիտէ ինչ և ինչու համար: Բանից զուրս է գալիս, որ մենք մեղաւոր էինք, տուելով երգիչ Ամիրջանի այն բերանացի յա- տարարութիւնը, թէ նա չը պիտի մասնակցէ յունիսի 3-ի ներկայացման: Այդ դեռ ոչինչ է: Բայց Արասխանան, պէտք է խոստովանել, ա- ռասպիներ կարողանում է սարքել, թէ և այն- քան անհոգի կերպով, որ, ինչպէս ասում են, «եփած հաւն էլ կը ծծաղի»: Առանց կարմե- լու, առանց քայլվելու, նա տուում է, թէ մեր խմբագրութիւնը խորհուրդ է տուել այժմ Վմիր- ջանին չը մասնակցել ներկայացման... Ամեն ինչ կարող էինք երեւակայել, բայց այդպիսի անաթո- թութիւն — երբեք:

Արասխանան, ի հարկէ, կամեցել է մի հա- րուածով երկու նապաստակի խիւղ—մի կողմից ցոյց տալ, թէ «Մշակի» խմբագրութիւնը բան ու գործ թողած՝ մի զուրկ մտածում է Արասխանան- ցի և նրա աշխատակիցների մասին, իսկ միւս կող- մից այն, թէ այժմ Վմիրջանի այնքան միախառն է, այն- քան զուրկ իր սեփական կամքից, որ լսել է մեր խորհուրդը: Ասե՛ք Արասխանան չէ ինչպէս վեր- չնորալի երգչին և ի դէպ, առիթ է գտել մի քանի կօմպլիմենտներ և շողքողթութիւններ անել իր աշխատակից Վրոյրին: «Մուրճի» խեղճ խմբագրը, հօգով մարմնով իր աշխատակիցնե- րի փառքին նուիրված մի բան է, որ դալիսի- ներ է բաժանում օր ու գիշեր, բայց միայն այն աշխատակիցներին, որոնք զովանքի օրը նրա մոլորակի պաշտօնն են կատարում: Այս ինչպէս է վերաբերվում նա իր նախկին աշխա- տակիցներին: Խօսելով այն մասին, որ Եղիշ Մաղաթեան 1892 թ. մի յօդուած է գրել, Ար- ասխանան պարզ է համարում բացատրել, որ Մաղաթեան չէր գործը չը կարողացաւ շա- բուական, հաւանօքն այն ոգեկան դրութեան պատճառով, որ յետոյ հոգեկան հիւսաւորութեան զարգացաւ: Որքան վատ, որքան սուր տեսակի զրականութեան է ծառայում Արասխանան, որպիսի հաճութեամբ օրէցօր աւելի և աւելի խրվում է այդ տիգրի մէջ: Եւ ով պիտի լինի, որ բռնէ նրա ձեռքից, բան հասկացնէ... Ան- բուժելի է միշտ զլիխայի գնալու անտը...»

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

Կ. ՊՈԼԻՍ, 10 յուլիսի: Սուլթանը կամենում էր նոր պատուիրակներ նշանակել խաղաղու- թեան բանակցութիւնները վարելու համար: Այն է նախկին արտաքին գործերի մինիստր Սաիդ- փաշային, Զեքի-փաշային և նախկին դեսպան Չիլ-փաշային: Առաջին երկուսի նշանակումը մերժված է:

Կ. ՊՈԼԻՍ, 10 յուլիսի: Յունիսի 9-ին Բուլիւրդե- րեւում կայացաւ դեսպանների խորհրդակցութիւն: Դեսպանները սպասում են, որ վաղվայ նիստում թուրքացի կողմից յայտարարութիւն տեղի կու- նայ սահմանի մասին: Խաղաղութեան դաշն կա- պելու յոյսերը աւելացել են:

Կ. ՊՈԼԻՍ, 10 յուլիսի: Այսօր հրատարակված

